ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

07 մայիսի 2019թ. No 1123 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԴԵՂԵՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 28 փետրվարի 2019 թվականի N 162-Ն 62-րդ կետի, Կառավարության 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 728-Լ որոշումը և հիմք ընդունելով «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի N 0101078219 առ 30.04.2019թ. գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել թվով 2 դեղի հավաստագրի վերաձևակերպումը՝ համաձայն հավելվածի:

2. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի ժ/պ Լ.Մելիքյանին՝

1) հնգօրյա ժամկետում ապահովել դեղերի վերաձևակերպված գրանցման հավաստագրերի ներկայացումը ՀՀ առողջապահության նախարարություն.

2) սահմանված ժամկետում ապահովել սույն հրամանի 1-ին կետում նշված դեղերի վերաձևակերպված գրանցման հավաստագրերի տրամադրումը հայտատուներին՝ որպես վերաձևակերպված հավաստագրի ուժի մեջ մտնելու ժամկետ նշել սույն հրամանի տրման օրը.

3) մինչև յուրաքանչյուր ամսվա 5-ը ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում) ներառելու նպատակով ՀՀ առողջապահության նախարարություն ներկայացնել նախորդ ամսվա ընթացքում պետական գրանցում ստացած դեղերի ցանկը:

Ընդհանուր և արտաքին կապերի բաժին
№ 4427 08 MAY 2019 ժամ 10⁵⁰
Կից ☐ Դեղի կարգավիճակ
Նշումներ

5/7/2019

X

VERIFIED OCSP 5/7/2019 15:28:16 GMT+4

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Ստաց. 08.05.19 ժ. 09⁴⁰

Հավելված

ՀՀ առողջապահության նախարարի

2019 թվականի մայիս 07 - ի

հրամանի N 1123 – Ա

## ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

| Հ/Հ | Առևտրային անվանում | Միջազգային չպատենտավորված (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումներ | Դեղաձև | Դեղաչափ և թողարկման ձև (փաթեթավորում) | Արտադրող ֆիրման | Երկիր | Գրանցման հավաստագրի իրավատեր | Բաց Թողման կարգ | Եզրակացության համար |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ֆունգոտերբին | տերբինաֆին (տերբինաֆինի հիդրոքլորիդ) | նրբաքսուք արտաքին կիրառման | 10մգ/գ; 15գ ալյումինե կամ պլաստիկե լամինապատ պարկուճ | Նիժֆարմ ԲԸ, 603950, ք. Նիժնի Նովգորոդ, Սալգանսկայա փ., 7 | Ռուսաստան | Նիժֆարմ ԲԸ, 603950, ք. Նիժնի Նովգորոդ, Սալգանսկայա փ., 7, Ռուսաստան | ԱԴ | 14464 |
| 2. | Վիզաննա | դիենոգեստ (միկրոնիզացված) | դեղահատեր | 2մգ; (28/2x14/) բլիստերում | Բայեր Վեյմար ԳմբՀ և Քո. ԿԳ, Դոբերեյներշտրասե 20, 99427 Վեյմար | Գերմանիա | Բայեր ԱԳ, Կայզեր-Վիլհելմ-Ալե 1, 51373 Լևերկուզեն, Գերմանիա | Դ | 17987 |